ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

ԵՊՀ Իջևանի մասնաճուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

15-ը ապրիլի 2019թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի վարիչների հաշվետվություն:

/զեկ.Գ. Ս. Սիմոնյան, Ա. Ս. Հովակիմյան/

2. ՈՒսումնական խորհրդատուի հաշվետվություն

/զեկ.Ք. Վ. Օթարյան/

3.2019-2023թ.թ. ուսումնական պլանների քննարկում և հաստատում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի գիտխորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. ². Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. ². Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ Գ. Ս. Սիմոնյանը: Նա ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքները, որոնք ըստ իրականացվել են համաձայն ուսումնական պրցեսի կազմակերպման ժամանակացույցի: ժամանակին կազմվել և ուսանողներին տրվել են ընթացիկ քննությունների հարցաշարերը: Կազմակերպվել և անց են կացվել I կիսամյակի ընթացիկ ստուգումներն ու քննությունները: Ժամանակին և պատշաճ անց է կացվել I կիսամյակի քննաշրջանը: ՈՒսումնական պրոցեսը կազմակերպվել է դասացուցակի հիման վրա, դասաժամերի բաց թողում չի եղել: Այժմ նախապատրաստական աշխատանքներ է տարվում II կիսամյակի ընթացիկ ստուգումների, քննությունների, ավարտական աշխատանքների

պաշտպանության և քննաշրջանի կազմակերպման համար: Նա ներկայացրեց, որ ամբիոնը դեկանատի հետ համատեղ իրականացնում են ուսումնական գործընթացին համապատասխան արդյունավետ աշխատանք: Կազմվել է ,,Բնապահպանություն և բնօգտագործում,, մասնագիտության կրթական ծրագիրը և ուսումնական պլանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ս. Գասպարյանը, Գ. Վ. Գուլակյանը և Կ. Հ. Հովսեփյանը: Նրանք համակարծիք էին ներկայացվածին և առաջարկեցին ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել ,,բավարար,,:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կատարած աշխատանքները գնահատել ,,բավարար,,:

Այնուհետև խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ձայնը տալիս է Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Ս. Հովակիմյանին:

Ա. Ս. Հովակիմյանը ներկայացրեց ամբիոնում իրականացված աշխատանքները կապված ուսումնական պրոցեսի հետ: Նա ևս ներկայացրեց, որ ժամանակին տրվել են ուսանողներին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների հարցաշարերը: Կազմակերպվել և անց են կացվել քննությունները: Քննաշրջանի արդյունքներով գրանցվել է երեք ակադեմիական պարտք ունեցող ուսանող: Ուսումնական պարապմունքները անց են կացվում դասացուցակի հիման վրա, դասաժամերի բացթողում չի եղել: Այնուհետև ամբիոնի վարիչը հայտնեց, որ դեկանատի հետ համատեղ աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը հաճախումների և ուսումնառության համակարգում: Ամբիոնում կազմվում է 2019-23 ուսումնական պլանները, դասախոսի պահանջարկ չկա, կարգապահությունը դրված է բավարար հիմքի վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ք. Վ. Օթարյանը, Մ. Ա. Ճաղարյանը և ուրիշներ: Նրանք ամբիոնի առաջարկեցին ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել ,,բավարար,,:

Այնուհետև ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ևս առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել ,,բավարար,,:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել ,,բավարար,,:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը զեկուցման համար ձայնը տվեց ֆակուլտետի ուսումնական խորհրդատու Ք. Վ. Օթարյանին

Նա ներկայացրեց, որ իրականացվում է ուսանողների հաճախումների վերահսկողություն, դասաժամերի իրականացման, ուսումնական պրոցեսի հետ կապված բոլոր աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Շ. Մարգարյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք նշեցին, որ դեկանատի և ամբիոնների հետ համատեղ ուսումնական խորհրդատուն կատարում է իրեն պարտականությունները և առաջարկեցին նրա կատարած աշխատանքը գնահատել ,,բավարար,,:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ֆակուլտետի ուսումնական խորհրդատու Ք. Վ. Օթարյանի կատարած աշխատանքը գնահատել ,,բավարար,,:

Օրակարգի երրորդ հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց 2019-23 տարվա ուսումնական պլանը, որը կազմվել է ,,Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/ և ,,Բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտության համար:

Քննարկումից հետո որոշեցին հաստատել 2019-23 թթ. ուսումնական պլանները

ՆԱԽԱԳԱՀ **Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**